ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանի՝ Ղազախստանի Հանրապետություն (Նուր Սուլթան) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սրբուհի Գալյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստանի Հանրապետություն (Նուր Սուլթան), 2019 թվականի հոկտեմբերի 1-4-ը ներառյալ:

Հրավիրող կողմը՝ Ղազախստանի Հանրապետության Հակակոռուպցիոն գործակալություն, Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիա:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) 8-րդ ամենամյա վեհաժողովին՝ Ակադեմիայի և անդամ-պետությունների ներկայացուցիչների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ վերջիններիս կողմից ձեռնարկած և ապագայում նախատեսվելիք քայլերը, հակակոռուպցիոն ռազմավարական փաստաթղթերի հիմնական առաջնահերթությունները ներկայացնելու և ոլորտի լավագույն փորձի փոխանակման նպատակով:

Քննարկված թեմաները՝ Այցի շրջանակներում քննարկվել են Ակադեմիայի անդամ-պետություններում կոռուպցիայի մասին հաղորդման մեխանիզմների իրականացման փորձը և միջազգային պրակտիկայում ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև Ակադեմիայի զարգացման հեռանկարները, այդ թվում՝ դրա ֆինանսական կայունության ապահովմանն ուղղված հարցերը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում Ակադեմիայի դերի և կարևորության վերաբերյալ քննարկումներ են եղել Ակադեմիայի ժամանակավոր տնօրեն Քրիստիան Պոն-Հուֆնագլի, Ղազախստանի Պետական քարտուղար Կրիմբեկ Կուշերբաևի հետ: «Ազդարարների պաշտպանություն. ազգային օրենսդրության և քաղաքականության իմպլեմենտացիա» թեմայով քննարկում է եղել Ակադեմիայի կառավարիչների խորհրդի նախագահ Ալեքսեյ Կոնովի, Կորեայի Հանրապետության հակակոռուպցիոն և քաղաքացիական իրավունքների հանձնաժողովի նախագահ Պակ Ուն Յոնգի, Կատարի Պետության Վարչական վերահսկողության և թափանցիկության մարմնի միջազգային

համագործակցության վարչության պետ Հուսեյն Հասանի, Արևմտյան Ղազախստանի Հակակոռուպցիոն ծառայության վարչության պետի տեղակալ Նուրդուլեթ Սամեթի և Ակադեմիայի դասախոս, ազդարարման, տեղեկատվական իրավունքների անկախ մասնագետ Այշլի Սավեյջի հետ: ՀՀ արդարադատության նախարարի տեղակալն առանձին հանդիպում է ունեցել նաև Ղազախստանի Հանրապետության Հակակոռուպցիոն գործակալության նախագահ Ալիկ Շպիկբաևի հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հեռանկարները:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի 8-րդ ամենամյա վեհաժողովի ավարտին Ակադեմիայի անդամ-պետություններն ընդունել են Ակադեմիայի հետագա գործունեության ապահովմանն ու ընդլայնմանն ուղղված չորս բանաձևեր:

X _____

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝

Սրբուհի Գալյան